Արձանագրություն N 2

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար թարգմանչական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13 հուլիսի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գոհար Սահակյանը, անդամներ՝ Անուշ Ղարիբյանը, Սամվել Օհանյանը, Գոռ Հեբոյանը, Ժիրայր Կարապետյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և ուսումնասիրմ ան մասին

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գոհար Սահակյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը	
	«Վի Գրուպ» ՍՊԸ	«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/	
	ԱԱՀ չվճարող	
1	82 110	180 000
2	72 600	150 000
3	41 055	90 000

Գնման գործընթացը կազմակերպվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք (բացառությամբ «Վի Գրուպ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում բացակայում է հավելված 9-ը և վճարման պահանջագիրը) կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

« Վի Գրուպ » ՍՊԸ-ի հայտը մերժել:

« ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ » ՍՊԸ-ին՝

- ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով գնման հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Գոհար Սահակյան

անդամներ _____ Անուշ Ղարիբյան

_____ Սամվել Օհանյան

_____ Գոռ Հեբոյան

_____ Ժիրայր Կարապետյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան